სოციალური მომსახურების სააგენტო

- Հաշմանդամ երեխայի պարագայում՝ երեխայի ծննդյան վկայականը, պատճենի հետ մեկտեղ:

**Հաշմանդամության կենսաթոշակի քանակները.**
Սովորական պայմաններ.
**I խմբի հաշմանդամների համար՝ 100,00 լարի,**
**II խմբի հաշմանդամների համար՝ 70,00 լարի:**

II Համաշխարհային պատերազմի, Վրաստանի տարածքային ամբողջականության և այլ պետությունների տարածքում մարտական գործողությունների մասնակիցներին, ընդհանուր հիվանդությամբ.
**I խմբի հաշմանդամների համար՝ 100,00 լարի,**
**II խմբի հաշմանդամների համար՝ 70,00 լարի:**

II Համաշխարհային պատերազմի, տարածքային ամբողջականության, ազատության և անկախության համար մարտական գործողությունների ժամանակ հաշմանդամացած անձանց.
**I կամ II խմբերի հաշմանդամների համար՝ 129,00 լարի,**
**III խմբի հաշմանդամների համար՝ 80,00 լարի:**

Այլ պետությունների տարածքում մարտական գործողությունների ժամանակ հաշմանդամացած անձանց.
**I և II խմբի հաշմանդամների համար՝ 84,00 լարի,**
**III խմբի հաշմանդամների համար՝ 70,00 լարի:**

**Պատերազմի և ռազմական ուժերի վետերանների և նրանց հավասարեցրած անձանց համար հաշմանդամության կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցուցակը.**

- Դիմում (սոցիալական ծառայության ործակալության շրջանային բաժնի պետի անունով).
- Անձը հաստատող վկայական, պատճենի հետ մեկտեղ.
- Բուժ-հիմնարկության կողմից տրված բժշկական-սոցիալական փորձաքննության ակտից քաղվածք, որտեղ նշված կլինի կարողության սահմանափակման պատճառական կապը պատերազմի հետ.
- Վետերանների գործերի դեպարտամենտի կողմից տրված վետերանի կարգավիճակը հաստատող փաստաթուղթ (վետերանի պլաստիկ քարտ):

## Կենսաթոշակ՝ խնամակալի վախճանվելու պատճառով

Խնամակալի վախճանվելու պատճառով կենսաթոշակ նշանակվում է վախճանվածի յուրաքանչյուր անչափահաս զավակի՝ մինչև 18 տարեկան հասակը:

Կենսաթոշակի նշանակումը հնարավոր է սոցիալական ծառայության գործակալության շրջանային բաժնում, ըստ գրանցման վայրի:

Երեխա(ներ)ի և հոգևորդի երեխա(ներ)ի համար՝ մինչև 18 տարեկան հասակը, խնամակալի վախճանվելու պատճառով կենսաթոշակ նշանակելու համար ներկայացվելիք փաստաթղթերի ցուցակը.

- Դիմում (սոցիալական ծառայության գործակալության շրջանային բաժնի պետի անունով).
- Ծնողներից մեկի կամ խնամակալի/հոգաբարձուի անձը հաստատող վկայական, պատճենի հետ մեկտեղ.
- Խնամակալի վախճանման վկայական, պատճենի հետ մեկտեղ.
- Խնամակալը կորցրածի ծննդյան վկայականը, պատճենի հետ մեկտեղ:

**Կենսաթոշակի քանակը՝ 55.00 լարի:**

## Կենսաթոշակի նշանակման մասին որոշումը ընդունվում է դիմում ներկայացնելուց 15 աշխատանքային օրվա ընթացքում

Վրաստանի աշխատանքի, առողջության և սոցիալական պաշտպանության նախարարություն

**Սոցիալական ծառայության գործակալություն**

Հասցեն՝ Թբիլիսի, Ծերեթելու պողոտա №144
Թեժ գիծ՝ 2 51 00 30
www.ssa.gov.ge
info@ssa.gov.ge

Վրաստանի աշխատանքի, առողջության և սոցիալական պաշտպանության նախարարություն

Սոցիալական ծառայության գործակալություն

# Պետական կենսաթոշակ

# Պետական կենսաթոշակ

«Պետական կենսաթոշակի մասին» Վրաստանի օրենքը տարածվում է.

- Վրաստանի տարածքում մշտապես բնակվող Վրաստանի քաղաքացիների վրա:
- Պետական կենսաթոշակի նշանակման մասին դիմում ներկայացնելու պահին, վերջին 10 տարվա ընթացքում Վրաստանի տարածքում օրինական հիման վրա մշտապես բնակվող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց վրա:

Վրաստանի օրենքի համաձայն, պետական կենսաթոշակի նշանակման հիմքերն են.

- **Կենսաթոշակային տարիքին հասնելը:**
  Տղամարդկանց համար՝ 65 տարի,
  Կանանց համար՝ 60 տարի:
- **Սահմանափակ կարողության կարգավիճակի հաստատումը:**
- **Խնամակալի վախճանվելը:**

## Տարիքի սկզբունքով կնսաթոշակի նշանակումը

«Պետական կենսաթոշակի մասին» Վրաստանի օրենքի համաձայն, անձնավորությունը/ներկայացուցիչը, տարիքի սկզբունքով կենսաթոշակ նշանակելու համար պետք է դիմի սոցիալական ծառայության գործակալության շրջանային բաժին, ըստ գրանցման վայրի:

Տարիքի սկզբունքով կենսաթոշակի նշանակման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցուցակը.

- Դիմում (սոցիալական ծառայության շրջանային բաժնի պետի անունով):
- Անձը հաստատող վկայական, պատճենի հետ մեկտեղ:

**Կենսաթոշակի քանակը՝** 100.00 լարի:

## Տարիքի սկզբունքով կնսաթոշակին աշխատանքային ստաժի հավելման նշանակումը

2007 թվականի սեպտեմբերի մեկից սահմանվել է կենսաթոշակային տարիքի սկզբունքով նշանակված պետական կենսաթոշակի հավելումը, ըստ աշխատանքային ստաժի:

Կենսաթոշակին աշխատանքային ստաժի հավելման նշանակման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցուցակը.

- Դիմում (սոցիալական ծառայության գործակալության շրջանային բաժնի պետի անունով).
- Անձը հաստատող վկայական, պատճենի հետ մեկտեղ.
- Աշխատանքային ստաժը հաստատող փաստաթղթեր.
- Անհրաժեշտության դեպքում՝ այլ փաստաթղթեր.
  1. Տեղեկանք՝ ուսուցման ժամանաշրջանի մասին(դիպլոմի պատճեն).
  2. Տեղեկանք՝ զին-ծառայությունում գտնվելու ժամանաշրջանի մասին.
  3. Տեղեկանք՝ կազմակերպությունից (ուր աշխատում էր) աշխատանքի ժամանակաշրջանի և ազատման հիմքի ցուցումով.
  4. Դատավճիռ.
  5. Արխիվային տեղեկանքներ:

Կենսաթոշակ ստացողին կամ նրա հայցողին հավելում կնշանակվի (կվերահաշվվի) և կփոխհատուցվի համա-պատասխանորեն, հավելման վերահաշվման կամ հավելման նշանակման մասին դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ հաջորդ ամսվա մեկից:

Տարիքի սկզբունքով կենսաթոշակի քանակին ավելանում է հավելումը՝ աշխատանքային ստաժին, հետևյալ քանակով.

**0-ից մինչև 5 տարի՝ 2 լարի,**
**5-ից մինչև 15 տարի՝ 4 լարի,**
**15-ից մինչև 25 տարի՝ 7 լարի,**
**25 տարուց վեր՝ 10 լարի:**

**Բռնի ուժով վերաբնակեցված անձանց համար.**

Բռնի ուժով վերաբնակեցված անձը, որը փաստաթղթերով ի վիճակի չէ հաստատել աշխատանքային ստաժը, հավելումը սահմանվում է ըստ տարիքի, հետևյալ կարգով.

**Փախստական տղամարդկանց համար.**
65-ից մինչև 67 տարեկան՝ 2 լարի,
67-ից մինչև 69 տարեկան՝ 4 լարի,
69-ից մինչև 71 տարեկան՝ 7 լարի,
71 տարեկանից վեր՝ 10 լարի:

**Փախստական կանանց համար.**
60-ից մինչև 62 տարեկան՝ 2 լարի,
62-ից մինչև 64 տարեկան՝ 4 լարի,
64-ից մինչև 66 տարեկան՝ 7 լարի,
66 տարեկանից վեր՝ 10 լարի:

## Սահմանափակ կարողության (հաշմանդամության) պատճառով կենսաթոշակի նշանակում

**Սահմանափակ կարողության պատճառով կենսաթոշակ նշանակվում է.**

- Կտրուկ կերպով արտահայտված սահմանափակ կարողության կարգավիճակ ունեցող անձանց (I խումբ).
- Նշանակալիորեն արտահայտված սահմանափակ կարողության կարգավիճակ ունեցող անձանց (II խումբ).
- Չափավոր արտահայտված սահմանափակ կարողության կարգավիճակ ունեցող պատերազմի վետերաններին (III խումբ).
- Սահմանափակ կարողության կարգավիճակ ունեցող երեխաներին:

Կենսաթոշակի նշանակումը հնարավոր է ոցիալական ծառայության գործակալության շրջանային բաժնում, ըստ գրանցման վայրի:

Հաշմանդամության պատճառով կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցուցակը.

- Դիմում (սոցիալական ծառայության գործակալության շրջանային բաժնի պետի անունով).
- Անձը հաստատող վկայական, պատճենի հետ մեկտեղ.
- Բուժ-հիմնարկության կողմից տրված բժշկական-սոցիալական փորձաքննության ակտից քաղվածք.
- Անհրաժեշտության դեպքում՝ ծնողներից մեկի կամ խնամակալի/հոգաբարձուի անձը հաստատող վկայական, պատճենի հետ մեկտեղ.
- Խնամակալությունը/հոգաբարձությունը հաստատող փաստաթուղթ.